



68. ԱՆՍԿԱՄԻ ՇԱՌԸ

Մե թաքավոր ամմեն անքամ աղոթկից ետո ասում էր.—Աստվա՛ծ, դու անսկամի շառից եռու պախես:

Վազիրն ինչքան էտ խոսկերը լսում էր, մտկի մեջը ծծղում էր, հըմա վախենում էր թաքավորին խարցներ, թե հընչի յա էտենց ասում, չըլնի ըստէ մե գախտնիք կա, կամ թե թաքավորի գլխին մե շառ ա էկե, մենք խաբար չենք:

Մե օր էլ՝ աղոթկից ետո, հենց թաքավորն ասավ՝ Աստվա՛ծ, դու անսկամի շառից հեռու պախես, վեզիրը սիրտ արավ ու խառցուց:

—Թաքավորն ապրած կենա, մե խարց կարելի՞ յա:

Թաքավորն ասավ՝ կարելի յա:

Վազիրը խառցուց.—Թաքավոր, դու երգրի տերն էս, հընչի՞ ես ամմեն օր ասում. «Աստված, դու անսկամի շառից եռու պախես»:

Թաքավորը խառցուց.—Դու անսկամից չե՞ս վախենում:

—Ախրը, թաքավոր, մենք հընչի՞ բղի անսկամի շառից վախենանք, տենանք անսկամ ա, հրաման կըտանք գըլոխը կըկըղրեն, պըրծնի, կէթա:

—Վազի՛ր, հնարավոր չի գըլխատել,—ասաց թաքավորը:

Վազիրն էլի մտկի մեջ հընգավ, թե ո՞վ ա էս անսկամը, որ թաքավորը չի կանում գլխատա:

Հընցավ մե ամիս: Ամմեն օր թաքավորն հիրա խոսկը կրկնում էր, վազիրը մտկի մեջը ծծղում էր:

Մե օր էլ թաքավորը թաքուհուն ասավ.—Թաքուհի՛, ես կըհայտարարեմ, որ մե չափաթով էթում եմ մեր ժողովըրթի այվալաղն հիմանալու, հիմանալու մեր մասին ժողովուրթն ի՞նչ ա խոսում: Կըխաքնեմ դարվեչի չորեր, իմ տեղը կըթողեմ մեծ վազրին: Հիրկուն՝ ժամը ութթին, վազրին կըկանչես տուն, լավ կըպատվես, ետո կասես, որ. «Վազի՛ր, ես չեզի կանչեմ եմ, որ հէսօր քըչեր մնաս իմ մոտ, իմ կամքը կատարես, քանի հըլա թաքավորը չի էկե»: Էտ վախտ ես դուռը կըտփեմ, վազրին կըղնես էս դութու մեջը, կըգաս, դուռը կըբացես: Ըսուց ետո ամմեն բան չեզի կասեմ:

Թաքուհին համաձայնվեց:

Թաքավորը կանչեց վազրին ու ասավ.—Վազի՛ր, ես դձրվեչի չոր եմ խաքնում, էթամ ման գալու, մե շափաթ չեմ գա, դու երգիրը կառավարա՛:

Վազիրն ասավ՝ լա՛վ:

Միշուս օրը Թաքուհին ու մեծ վազիրը Թաքավորին ճամբու քցին, ետ էկան, Թաքուհին վազրին ասավ.—Մե՛ծ վազիր, հիրկուն՝ ժամը ութթին, իմ ղոնախն ես:

Վազիրն ասավ.—Աչկիս վրեն:

Հիրկուն վազիրն էկավ, Թաքուհին լավ սեղան էր բացե:

Նստան կերան-խման, Թաքուհին ձեռը քցեց վազրի վիզն ասավ.—Հէսօր իմ ղոնախն ես, իմ կամքը կըկատարես, չանքի Թաքավորը գա:

Հըմա էտ վախտը Թաքավորը դուռը տփեց: Թաքավորի սիրտն էլ կասկած հընգավ, չըլնի՞ հանգարց Թաքուհուն մե բան անա, քանի բան չի պատահե, էթամ:

Թաքավորը որ դուռը տփեց, Թաքուհին ասավ.—Վա՛յ, վազի՛ր, Թաքավորն էկավ, էրկսիս գլոխն էլ զանել կըտա, չո՛ւտ արա, հելի մտի՛ էս դութին:

Վազիրը դողալով հելավ մտավ դութին:

Թաքավորը ներս մտավ, տեսավ ճաչի սեղանը, կնգան ասավ.—Ա՛յ կնիկ, Հո սիրեկան չե՞ս բերե տունը, էս ի՞նչ ճաչի սեղան ա:

Կնիկն ասավ.—Թաքավո՛ր, դու գնացիր, սիրտս լցվավ, որոչեցի խմել, հարփել, որ քունս տանա:

Նստան, խաց ձերան, գինի խման, հելան գացին ննջարանը: Թաքավորը Թաքուհուն հըրկեց, որ էթա վազրին բաց Թողա, էթա հիրա տունը:

Թաքուհին էկավ, դութին բացեց, վազրին ասավ.—Շո՛ւտ հելի փախի, քանի Թաքավորը չի տեսե:

Միշուս օրը աղոթկից ետո Թաքավորն ասավ.—Աստվա՛ծ, դու անսկամի շնոփց եռու պախես:

Վազիրը որ վախից գույնը քցել էր, ասավ.—Ամմեն, ամմեն, Տեր Աստված:

Թաքավորը ծծղաց ու վազրին խառցուց.—Վազի՛ր, գույնտ քցեր ես, չըլնի՞ անսկամի շնոփ ես հոսստ էկե, «ամմեն, ամմեն» ես ասում:

—Թաքավո՛րն ապրած կենա, էն էլ ի՞նչ շնո, մահից եմ ազատվե:

—Դե որ ազատվեր ես, անսկամի գլոխը Թոցրո՛ւ:

—Հնարավոր չի գլխատել, Թաքավո՛ր:

Թաքավորը ծծղաց, էլ բան չասավ: